ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 316-Ա/2, 10.03.2020թ

«ՂՈՂԱՆՋ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ» ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Ղողանջ Հարսանեկան» ներկայացման իրականացմանն աջակցելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել «Ղողանջ Հարսանեկան» ներկայացման իրականացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար (տող՝ «Աջակցություն այլ մշակութային միջոցառումների և ծրագրերի իրականացմանը») Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված գումարներից հատկացնել 500.0 (հինգ հարյուր հազար) դրամ՝ 2020 թվականի փետրվարի 24-ին «Ղողանջ Հարսանեկան»

ներկայացման իրականացման նպատակով «Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի համերգասրահի վարձակալության ծախսերի փոխհատուցմանը:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) գլխավոր քարտուղարին սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը հատկացնելու համար հրամանի ուժի մեջ մտնելու պահից 15-օրյա ժամկետում կնքել պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր) «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի հետ:

4. Նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետին՝

1) հսկողություն իրականացնել պայմանագրի, պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման և բովանդակային հաշվետվության ներկայացման ժամկետի կատարման նկատմամբ:

2) պայմանագրով նախատեսված բովանդակային հաշվետվությունը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում դրա վերաբերյալ եզրակացությունը տրամադրել ֆինանսաբյուջետային վարչությանը:

3) մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը նախարարության գլխավոր քարտուղարի հաստատմանը ներկայացնել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրության նախագիծը և բովանդակային հաշվետվությունը:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանին:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
« » « » 2020թ.
N հրամանի

ԾՐԱԳԻՐ
«Ղողանջ Հարսանեկան» ներկայացման իրականացման

1	Կազմակերպության անվանում	«Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Գ. Լուսավորչի 6
3	Ծրագրի անվանում	«Ղողանջ Հարսանեկան» ներկայացում
3.1	Բովանդակություն	«Կարին» ՀԿ-ի կողմից իրականացվող Ազգագրական թատրոնի «Ղողանջ հարսանեկան» ներկայացումը հիմնված է Հայոց երգի վեհափառին՝ Կոմիտասին նվիրված Պարույր Սևակի «Անլռելի Զանգակատուն» պոեմի Ուխտագնացության, Խաղկապի և Հարսանեկան Ղողանջների և Հայրիկ Մուրադյանի հուշերից իր դստեր՝ Մարո Մուրադյանի կողմից գրառված և «Շատախի Բարբառը» գրքում հրապարակված «Զաքարե և Հասինկո» սիրո պատմության վրա հիմնված ավանդազրույցի վրա: Կոմիտասի հարյուրհիսունամյա հոբելյանին նվիրված մեր ներկայացումը նպատակ ունի ներկայացնելու այն հզոր առաքելությունը, վերմարդկային ջանքն ու Աստվածաշնորհ գործունեությունը, որ տասնամյակներ շարունակ իրականացնելու հայ երգին և Հայ երաժշտարվեստին վերածնելով, հավերժի երթ է պարգևել Առաքյալի սիրտ, իմաստասեր գլուխ, ադամանդ ճակատ ունեցող Հայոց երգի մարգարեն: Ներկայացման միջոցով լայն հանրության դատին է

		հանձնվում Կոմիտասի կողմից գրառված ոչ միայն մոտ երկու տասնյակ երգեր, Ակնա հարսանեկան ծեսի ծաղկոց երգեր, Վասպուրականի շրջանի հարսանեկան երգեր, նվագներ, պարեղանակներ, այլև Կոմիտասի հանճարի մոռացված մի էջ, իր կողմից գրառված ընդամենը ութ պարերից երկուսը՝ Շորորն ու Ճամփի պարը, ինչպես նաև հարսանեկան ծեսի ավանդույթներ, ավանդազրույցներ, ուխտագնացության, ժողովրդական խաղերի տեսարաններ և այլն: Ներկայացումը բաղկացած է երկու գործողություններից: Առաջինում ներկայացվում է ուխտագնացության տեսարանը, որի ընթացքում ներկայացվում է Զաքարեի և Հասինկոյի սիրո նախապատմությունն ու նաև Կոմիտասի առաքելության նկարագիրը, որի մասին Սևակն ասում էր. «Եվ որտեղ երգն էր, այնտեղ էլ նա էր»: Ուխտավորների մեջ, եկեղեցու գավթում, ժողովրդի պարի բովում, ամենուր Կոմիտասն է, թուղթ ու գրիչն իր ձեռքին, ամեն ելևէջին, ամեն շարժմանն ու ամեն խաղիկին ականջալուր: Երկրորդ գործողությունը բուն հարսանեկան արարողությունն է, իր ողջ ծիսական, երաժշտական հմայքով, որտեղ նույն կերպ երկու զուգահեռ պատմություններ են, Զաքարեի և Հասինկոյի հարսանիքն ու հարսանեկան ծեսն ու ամեն խաղ ու շարժում, ամեն ավանդույթ, երգչի ձայնի յուրաքանչյուր ելևէջից ու պարողի ոտքի շարժումից հունձք անող, և դարերի փոշուց ու օտար երանգից նրբորեն սրբագրող Կոմիտասյան հրաշքը: Ներկայացման վերջում հնչում է հարյուրհիսունամյա հեռավորությունից վերահիմաստավորված Կոմիտասի ողջ կյանքի ու գործունեության արժևորումը, Հայ մշակույթի նրա բանաձևումն ու Կոմիտասյան սկզբունքներին վերադառնալու օրվա հրամայականը:
3.2	Նպատակ	Ծրագրի հիմնախնդիրն է Կոմիտասի 151 ամյա հոբելյանի կապակցությամբ ողջ հայ ժողովրդի առաքելությանը աջակցելով նպաստել Կոմիտասի կյանքի և գործունեության

		ողջ մշակութային և մասնավորաբար լայն հասարակությանն անծանոթ Կոմիտասի պարային ժառանգության վեր հանումն ու հանրահռչակումը:
3.3	Անցկացման ժամկետ	24.02.2020 թ.
3.4	Անցկացման վայր	Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն
3.5	Ակնկալվող արդյունքներ	Ակնկալվող արդյունքն է հանդիսատեսին ավելի մոտեցնել սեփական մշակույթին, առաջացնել հետաքրքրություն թեմայի շուրջ, մեկ անգամ ևս մեծարել ու ուշադրության արժանացնել Վարդապետի կյանքն ու ծավալած հայանպաստ գործունեությունը, հանդիսատեսին փոխանցել ժամանակի մթնոլորտն ու առաջացնել ազգային արժեքները վերականգնելու և պահպանելու ցանկություն, ինչն էլ կհանգեցնի արժեհամակարգային փոփոխության:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Նախատեսվում է շուրջ 800 հանդիսատես: